

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՍՏԱՏԻԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ծնողների հետ կազակերպվող մանկավարժական աշխատանքի
արդյունավետության բարձրացման ձևերը մանկապարտեզում

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ՝ Այվազյան Հասմիկ

Երևան Շենգավիթ վարչական, անվան հ. 135 մանկապարտեզ

Վերապատրաստող՝ մ.գ.թ. Մարության Ս., Դալլաքյան Ա.

Բովանդակություն

Ներածություն -----	3
ԳԼՈՒԽ 1. Ծնողների հետ կազակերպվող մանկավարժական աշխատանքի արդյունավետության բարձրացման ձևերը մանկապարտեզում -----	4
ԳԼՈՒԽ 2. Փորձարարական հետազոտություն -----	8
Եզրակացություն -----	13
Գրականություն -----	14

Ներածություն

Թեմայի արդիականություն: Մարդկության պատմությունն ընթացել է աճող սերնդի դաստիարակության երկու հիմնական ուղղությունների (ընտանեկան և հասարակական) զուգորդմամբ: Դրանցից յուրաքանչյուրը դաստիարակության սոցիալական ինստիտուտ է երեխայի անհատականության ձևավորման ուրույն մեթոդներով և միջոցներով:

Նպատակ: Արդյունավետության բարձրացման ձևերը մանկապարտեզում ծնողի հետ կազմակերպվող աշխատանքում:

Նպատակից բխող խնդիրներ:

1. Գիտամեթոդական գրականության ուսումնասիրում
2. Գործնական պարապմունքների վերլուծություն
3. Պարապմունքի ներկայացում:
4. Արդյունքների ամփոփում

Գիտահետազոտական մեթոդներ: Դիտում, անկետավորում, վերլուծություն:

ԳԼՈՒԽ 1.

Ծնողների հետ կազակերպվող մանկավարժական աշխատանքի արդյունավետության բարձրացման ձևերը մանկապարտեզում

Անհատի կայացման գործընթացում ո՞րն է առավել կարևորն ու առաջնայինը՝ ընտանիքը, թե՞ մանկապարտեզն ու դպրոցը: Հնուց ի վեր տարակարծություններ կան այս հարցի շուրջ: Ոմանք կարևորում են ընտանիքի դերը: Մյուսներն առաջնություն են տալիս հասարակական հաստատություններին: Յ.Ա.Կոմենսկին մեծ տեղ է հատկացրել մայրական դպրոցին առանց դասացուցակի և ընդմիջման, առանց հանգստի ու արձակուրդի մայրական դասերին:

Դիտարկենք այն գործոնները, որոնք որոշարկում են ընտանեկան դաստիարակության ուժն ու ամրությունը:

1. Ընտանեկան դաստիարակությունը բնորոշվում է խոր հուզականությամբ և ինտիմ բնույթով: Դրա «ուղեկիցներն են» զավակների հանդեպ ծնողական սերն ու պատասխան զգացումը (կապվածություն, վստահություն, քնքշություն): Ընտանեկան դաստիարակության արդյունավետությունը բացատրվում է այն հուզականությամբ, որով շաղախված է ընտանիքի մթնոլորտը: Նման պարագայում երեխաներն իրենց ապահով ու պաշտպանված են զգում: Այստեղ կարելի է ամեն ինչ իմանալ «ամենագետ» պապիկից, թաքնվել մայրական տաքուկ գրկում և երջանիկ զգալ:

2. Դաստիարակությունն - ընտանիքում դրսևորվում է ամենատարբեր իրավիճակներում: Նման շարունակական ու տևական ներգործությունն արդյունավետ է երեխայի նյարդային համակարգի ներդաշնակ ձևավորման համար: Սակայն միշտ չէ, որ ընտանեկան դաստիարակությունը կարող է մանկավարժորեն գրագետ ուղղվածություն և ընթացք ունենալ:

3. Ընտանիքն ավելի լայն հնարավորություններ ունի՝ երեխային ընդգրկելու գործունեության բազմազան ու տարաբնույթ ձևերում (կենցաղային, աշխատանքային, տնտեսական, հաղորդակցական-դաստիարակչական): Եթե մանկապարտեզում երեխային դեպքից դեպք է որևէ աշխատանք հանձնարարվում, ապա ընտանիքում բոլորովին այլ պատկեր է: 1,5-2 տարեկան երեխան կարող է մշտական պարտավորություններ ունենալ երեկոյան քնելուց առաջ հավաքել խաղալիքները,

հայրիկին՝ հողաթափեր, պապիկին եթերը մաստուցել և այլն: 3-4 տարեկան երեխային վստահվում է ջրել սենյակային բույսերը, օգնել մեծերին, խնամել փոքրիկներին և այլն:

«Երեխան ընտանիքի հայելին է» արտահայտությունը զարմանալիորեն դիպուկ կերպով բնութագրում է երեխայի կողմնորոշումն այն հոգևոր և բարոյական սկզբունքների նկատմամբ, որոնք որդեգրվել են նրա հարազատների կողմից: Յուրաքանչյուր ընտանիք ունի բարու ու գթասրտության իր պատկերացումները: Եթե երեխայի շրջապատում «թույլատրելի» է համարվում ստի, կեղծիքի ու դաժանության առկայությունը, ապա դժվար թե այդ երեխան զերծ մնա դրանց ավերիչ ազդեցությունից:

Ընդօրինակելով մտերիմներին, սիրելի մարդկանց, հետևելով նրանց «կենսական դասերին»՝ երեխան աստիճանաբար յուրացնում է վարվելակերպի, փոխհաղորդակցման մշակույթը: Համառ մայրը կարող է տառապել որդու համառության պատճառով «մարտական» հայրը՝ դատապարտեց ինքն իրեն՝ լսելով երեխայի կովարարության մասին բողոքները: Իզուր չէ, որ մեծ մանկավարժներն ընդգծել են, որ ընտանեկան դաստիարակությունն ամենից առաջ ծնողների ինքնադաստիարակությունն է:

Պետք է նշել, որ ընտանիքներ միատարր չեն: Դրանք տարբերակված են սոցիալական, տարիքային սեռային և մասնագիտական խմբերով: Սա օգնում է, որ երեխան առավել լայնորեն դրսևորի իր հնարավորությունները:

Այսպես, ժամանակակից գի- տությունն ընդգծում է երեխայի դաստիարակության գործում ընտանիքի առաջնային դերը: Դրան է հանգեցնում նաև կրթության բնագավառում պետական քաղաքականության փոփոխությունը:

Սակայն բոլոր ընտանիքները չէ, որ ամբողջությամբ իրականացնում են համալիր բարենպաստ ներգործություն: Պատճառները բազմազան են. որոշ ընտանիքներ չեն ցանկանում դաստիարակել, մյուսները չեն կարողանում, երրորդները չեն հասկանում դրա կարևորությունը: Բոլոր դեպքերում զգացվում է նախադպրոցական հաստատությունների օգնության անհրաժեշտությունը: Հաճախ ծնողների հետ աշխատանքը սահմանափակվում է միայն մանկավարժական քարոզչությամբ: Այս դեպքում ընտանիքի անդամները ներգործության օբյեկտ են համարվում: Արդյունքում

բացակայում է հետադարձ կապը: Նախադպրոցական դաստիարակության ընթացող վերակառուցման հիմքում առկա են մանկավարժական աշխատանքի հումանիզացումը և ապագադափարականացումը, երեխայի անհատականության զարգացումը: Դրանց շնորհիվ ապահովվելու են ինքնադրսևորման համար բարենպաստ պայմաններ (տաք, ընկերական մթնոլորտ, բաց ու անկեղծ խոսակցություն, որը կօգնի երեխային՝ թե՛ ինքն իր և թե՛ շրջապատի հետ բարյացակամ ու ներդաշնակ ապրելու):

Կարևորվում են շփման հմտությունները, որոնց հիմքում ազատանկաշկանդ արտահայտվելու կարողությունն է: Երեխան իր շրջակա միջավայրի մասին շատ իմանալով և ինքնուրույն ճշտելով իր փոխհարաբերությունները՝ հեշտությամբ կարող է լուծել իր խնդիրները: Դրան կարող են օգնել նաև ընտանիքում ծագող բարդությունների լուծումները:

Այլևս կասկածից վեր է նախադպրոցական դաստիարակության հասարակայնորեն էական անհրաժեշտությունը: Միշտ էլ մանկապարտեզին ներկայացվել են բարձր պահանջներ: Վերջին տարիներին դրանք շեշտադրվում են առավելագույնս Տարիներ շարունակ ընդգծվել է մանկապարտեզի սոցիալական գործոնը. ազատել մայրերին, կանանց՝ աշխատանքի համար: Հիմա իրավիճակը փոխվել է. մանկապարտեզը գնահատվում է իր մանկավարժական գործունեությամբ (ինչպե՞ս են դաստիարակում, ի՞նչ են սովորեցնում, ինչպե՞ս են նախապատրաստում դպրոցին): Այստեղ է, որ մանկապարտեզը, ի դեմս ընտանիքի, գտնում է դաշնակից, գաղափարակից՝ երեխայի դաստիարակության գործում: Նշենք, որ մանկավարժները միշտ չէ, որ խորամուխ են լինում ընտանիքի հետ համագործակցության հարցի կարևորության մեջ: Դա, հիրավի, մեր բացթողումներից է: Որոշ մանկավարժներ, վստահելով իրենց գիտելիքներին, համարում են, որ իրենք ճիշտ են դաստիարակում: Այդպես են մտածում և շատ ծնողներ կարծելով, որ իրենց երեխային ավելի լավ գիտեն և հաջողությամբ կարող են լուծել նրան վերաբերող ցանկացած խնդիր: Այս երկու մոտեցումներն էլ թերի են:

Անհրաժեշտ է ի մի բերել այդ երկու սոցիալական ինստիտուտների ուժեղ և թույլ կողմերը: Օրինակ, հուզական, սպորտային ոլորտներում ընտանիքի հնարավորություններն են ավելին, իսկ ուսուցման, ստեղծագործական

ունակությունների զարգացման և այլ հարցերում մանկապարտեզներին: Այսպիսով, ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Ո՞վքեր պետք է լինեն դրա նախաձեռնողը: Անշուշտ, մանկավարժները: Նրանք պետք է ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի դաստիարակության: Կարևոր է, որ ծնողները հավատ ընծայեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությանը, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հատկանիշները: Այդ վստահությունն ու հեղինակությունը հենց այնպես չեն տրվում: Դրանք պետք է վաստակի մանկավարժը:

Միջազգային վիճակագրությունը պարզել է, որ ժամանակակից ընտանեկան դաստիարակությունն այնքան էլ արդյունավետ չէ, որքան պետք է լիներ: Այդ պատճառով շատ երկրներում (նաև մեզանում) մշակվում են հատուկ ծրագրեր, որոնք նպատակաուղղված են ընտանիք ների մանկավարժական մակարդակ բարձրացմանը: Գործընթացին պետ, է օգնեն գրականությունը, ռադիոն հեռուստատեսությունը:

Ծնողների հոգեբանամանկա վարժական իրազեկությունը կարող են իրականացնել նախադպրոցակա հաստատությունները: Այսպես, ավագ. տարիքի խմբերի դաստիարակ ծնողների հետ աշխատանքը նախ առաջ բնութագրվում է հոգեբանա ֆիզիոլոգիական առանձնահատկո թյուններով երեխայի արագ զարգացումը պահանջում է ժամանակի. փոխել ուսուցման ու դաստիարակության մեթոդաբանությունը: Ծնողների հետ խորհրդատվական աշխատանքն անհրաժեշտ է կազմակերպել առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման պայմանների ստեղծման, աղապտացման հարցերի ընդգրկմամբ: Հարկավոր է բժշկական անձնակազմի հետ համատեղ լուսաբանել հիգիենիկ խնամքի, ռացիոնալ սննդի, կոփման, օրվա ռեժիմի, մերսման, մարմնամարզության խնդիրները: Ընդ որում, խորհուրդները պետք է լինեն ոչ միայն ընդհանրական բնույթի, այլև կոնկրետ երեխայի՝ ասենք, Վահեի, Վահագնի, Լիլիթի վերաբերմամբ: Որպեսզի մանկապարտեզը բաց համակարգ լինի, անհրաժեշտ է կրթական գործընթացը հարստացնել ամենատարբեր ազդեցություններով: Ամենից առաջ անհրաժեշտ է մանկապարտեզի դռները լայն բացել ծնողների և ընտանիքի մյուս անդամների առաջ: Հարկավոր է ը ընդլայնել ավանդական հաղորդակցման (տոնակատարություններ,

հատկ վաքույթներ, ժողովներ և այլն) շրջանակները: Ծնողները և ընտանիքի և մյուս անդամները կարող են նշանակալից կերպով ազդել երեխաների մանկապարտեզային կյանքի ոլորտի վրա(ներառյալ կրթական գործընթացը): Օրինակ, Մոնայի հայրը արտասահմանից մուլտֆիլմեր և լուսանկարներ է բերել: Դրանց ցուցադրումը շատ հետաքրքիր կլինի երեխաներին: Դավթի՝ նկարչուհի մորաքույրը երեխաներին ցույց է տալիս իր նկարները, և նրանց առաջ բացվում են ստեղծագործական աշխարհի որոշ գաղտնիքներ: Նկարչուհին միջոցառումների ժամանակ ձևավորում է խմբասենյակը, ցուցահանդեսի մասնակից դարձնում երեխաներին: Այսպես կարելի է համագործակցության շատ եզրեր գտնել գրքերի նորոգման, ասեղնագործության և այլ աշխատանքներում: Այս ամենը անհրաժեշտ է հենց երեխաներին՝ ոչ միայն այն պատճառով, որ նրանք ինչ-որ բան սովորեն. ամեն մի երեխա էլ հպարտության զգացումով կհամակվի, երբ ընկերները հիացմունքով դիտեն իր հարագատներին: Դա կարող է խթան դառնալ շատ խնդիրների լուծման համար: Մյուս կողմից՝ մանկավարժներն այդ կերպ հնարավորություն են ստանում ավելի լավ ճանաչելու յուրաքանչյուր երեխայի ընտանիքը, հայտնաբերելու դաստիարակության գործում նրա թույլ և ուժեղ կողմերը, որոշելու իրենց օգնության չափը, երբեմն էլ՝ ուղղակի սովորելու նրանցից: Այս աշխատանքների հիմնական կազմակերպողը վարիչն է: Նա աշխատում է ստեղծել դաստիարակության միասնական համակարգ՝ մանկապարտեզում և ընտանիքում:



ԳԼՈՒԽ 2. Փորձարարական հետազոտություն

Հիմնական խնդիրները և մոտավոր բովանդակությունը նշվում են տարեկան աշխատանքային պլանում, կոնկրետացվում օրացուցային պլաններում: Այս ուղղությամբ աշխատանքն արդյունավետ կարող է լինել, եթե գուցակցվեն համագործակցության շատ ձևեր, ներգրավվեն ողջ կոլեկտիվի ու ընտանիքի անդամները:

Պայմանները՝ համագործակցված ու նպատակային պլանայնություն, տարբերակված մոտեցում երեխաների նկատմամբ՝ ըստ ընտանիքների ինքնատիպության, բարյացակամության և հրապարակայնության:

Մեթոդները՝ անկետավորում, երեխաների ընդհանուր նպատակային դիտումներ, զրույցներ, այցելություններ:

Ձևերը՝ խորհրդատվություններ: Սովորաբար պլանավորվում է համակարգ, ըստ որի կազմակերպվում են անհատական և ենթախմբային խորհրդատվություններ: Կարելի է հրավիրել տարբեր խմբերի ծնողների, որոնք ունեն կամ նույն, կամ հակադարձ խնդիրները (օրինակ, լավ նկարող կամ բացառիկ երաժշտական ունակություններ ունեցող, լացկան, ամոթխած, համարձակ, երեխաներ): Նման աշխատանքն օգնում է ծնողներին ձեռք բերել պրոբլեմային հարցեր լուծելու համապատասխան գիտելիքներ և հմտություններ: Համագործակցությունը կարող է կայանալ տարբեր ձևերով, քննարկումներ, գործնական պարապմունքներ, մասնագետի հաղորդումներ և այլն: Սա առանձնապես օգտակար կարող է լինել

երիտասարդ ծնողների համար:

Հարկավոր է օգնել երիտասարդ ծնողներին՝ հոգատարությամբ և զգուշությամբ զբաղվելու ոչ միայն երեխաների խնամքով ու առողջական հարցերով, այլև նրանց հոգևոր աճով: Անհրաժեշտ է վարպետորեն ու խելամտորեն կազմակերպել երեխաների կենցաղը, գործունեությունը, նրանց մասնակից դարձնել ընտանեկան առօրյային՝ որպես ընտանիքի լիիրավ ու հավասար անդամների:

Ընտանիքի և մանկապարտեզի համատեղ աշխատանքն արդյունավետ կլինի, եթե հենց առաջին ծանոթության ժամանակ ծնողը, ի դեմս դաստիարակի, տեսնի խորապես հե տաքքրասեր, գործիմաց և լավ մարդու: Դաստիարակը պետք

գործարար կապեր ստեղծի ընտանիքի հետ: Հարկավոր է նրանց համոզել որ դաստիարակությունը բնավ է դյուրին գործ չէ:

Առաջին հանդիպման ժամանակ նպատակահարմար է ծնողներ բաժանել նոթատետրեր: Դրանք կարելի է ձևավորել հետևյալ կերպ՝ առջին էջին՝ փակցնել երեխայի նկարչական աշխատանքը (ցանկալի ընտանեկան թեմաներով), երրորդ էջում՝ զետեղել ընտանիքի վերաբերյալ ասույթներ: Նման մտահղացումը ոչ միայն կշոյի ծնողների արժանապատվությունը, այլև ստիպի կատարել որոշակի գրառումներ՝ դաստիարակության խնդիրների շուրջ:

Կարելի է նոթատետրում հա տուկ նշումներ կատարել երեխայի արարքների վերաբերյալ, գրառե նրանց սուր, հնարամիտ ու հետա քրքրաշարժ խոսքերը: Զրույցները՝ կազմակերպվում են անհատական և խմբակային ձևով: Երկու դեպքում էլ հստակ նպատակ է դրվում, թե ինչ պետք է բացահայտել, ինչով օգնել: Զրույցի բովանդակությունը պետք է հակիրճ և ծնողների համար նշանակալից լինի: Զրույցն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որպեսզի խոսակցին դրդի արտահայտվելու: Դաստիարակը պետք է կարողանա նաև ծնողին լսել, դրսևորել իր որոշակի վերաբերմունքը: Անպայման պետք է զրուցել երեխաների բնավորության շատ գծերի մասին: Բացասական երևույթներին անհրաժեշտ է անդրադառնալ զգուշորեն: Շատ կարևոր է, թե ինչպես է «մատուցվում» ասելիքը: Զրուցել կարելի է մեղմ, հանգիստ, բայց պահանջկոտ տոնով, այնպես, որ համատեղ ջանքերով հաջողության հասնելու հնարներ գտնվեն: Խելացի, բանիմաց, աշխատանքը սիրող դաստիարակը գիտե, թե ինչպես կարելի է հենվել երեխայի դրական հատկանիշների և ձեռքբերումների վրա ու այդ մասին խոսել ծնողների հետ: Նա պետք է զրուցի ոչ միայն երեխաների, այլև առօրյա հոգսերի, հասարակական ու մշակութային կյանքի, բազմազան իրադրությունների շուրջ: Ցավոք, նման զրույց-խորհրդատվությունների արժեքը դեռևս չեն գիտակցում որոշ դաստիարակներ: Հատուկ զրույց-խորհրդատվություններով պետք է օգնել ծնողներին ճիշտ կազմակերպելու երեխաների մասնակցությունը ժողովրդական ծեսերին և տոնակատարություններին (մկրրտություն, Վարդավառ, Համբարձման տոն, ատամնահատիկ, հարսանյաց հանդեսներ...), ինչպես նաև մեծ զգուշությամբ՝ տխուր արարողություններին:

Երկխոսության ժամանակ հեռավորությունը միմյանցից պետք է չափավոր լինի (մոտավորապես՝ 90 սմ): Փորձը ցույց է տվել, որ գրուցակիցներից մեկի կանգնած, մյուսի նստած լինելու դեպքում երկխոսությունը 2 րոպեից ավելին չի կարող տևել: Խրախուսելի է մեծի և ուսումնադաստիարակչական աշխատանքների առանձնահատկություններին և մասնակցելու ողջ գործընթացին: Կարելի է ցուցադրել երեխաների կոլեկտիվ աշխատանքներ, գործունեության որևէ ձև, պարապմունք, միջոցառում: Դրանից հետո վարիչը կամ դաստիարակը գրուցում է ծնողների հետ, բացահայտում նրանց տպավորությունները, պատասխանում հարցերին:

Այցելություններ՝ ընտանիք: Սա կարևոր տեղեկատվություն կարող է տալ երեխայի մասին և ամրապնդել փոխհաղորդակցումը: Դաստիարակը նախապես տեղեկացնում է իր այցելության նպատակի մասին: Գնալ տուն երեխայի մոտ, նշանակում է՝ հյուր գնալ: Այսինքն՝ պետք է ունենալ լավ տրամադրություն, մոռանալ բողոքների մասին, թույլ չտալ դիտողություններ և քննադատություններ, խորհուրդներ տալ զգուշավորությամբ: Այստեղ է, որ դաստիարակը նկատում է, թե ինչպիսին է ընտանիքում մանկավարժական մթնոլորտը և պարզում երեխայի անձնավորության հետ կապված կարևորագույն հարցերի պատճառները:

Ծնողական համաժողովներ:

Հիմնական նպատակը պետք է լինի ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումը: Նախապես ծնողները դաստիարակի օգնությամբ ընտրում են թեման: Համաժողովի ժամանակ կարող է ելույթ ունենալ որևէ մասնագետ՝ Նպատակա Հարմար է կազմակերպել ցուցահանդես՝ երեխաների կամ մանկավարժների ձեռքի աշխատանքների, մանկավարժական գրականության ներառմամբ: Կարելի է համաժողովն ավարտել ընտանիքի անդամների, երեխաների և մանկապարտեզի աշխատակիցների ուժերով:



Համագործակցության համեմատաբար թարմ ու մտերմիկ ձևեր են սպորտային միջոցառումները, հարց ու պատասխանի երեկոները, բարի գործերի օրերը, «Կլոր սեղանը» և այլն:

Դաստիարակը պետք է իմանա մասնակիցների անունները (առաջին ծանոթության դեպքում կարելի է սեղանին փոփած թղթի վրա գրել անունները): Չի կարելի ձգձգել միջոցառումը: 2-3 ծնողի հակիրճ խոսքից հետո արժեհամատո ընդհանրացում կատարել՝ խոսքը համեմելով խմբի երեխաների կյանքի կոնկրետ օրինակներով, զվարճալի և հետաքրքիր իրադարձություններով:

Մտքերի փոխանակության և բանավեճի նման ձևերը հնարավորություն են տալիս յուրաքանչյուր ծնողի բացահայտ արտահայտել իր կարծիքը: Հայտնի է, որ նման դեպքերում է ծնվում ճշմարտությունը:

Յուրաքանչյուր քննարկում բանավեճի վերջում դաստիարակը ծնողներին փոխանցում է նախապատրաստված հարցերը, որոնք էլ կդառնան հաջորդ հանդիպման նյութը:

Կարելի է կազմակերպել ոտանավորի լավագույն արտասանության մրցույթ: Երեխաները (եթե կարիք կա նրանց մասնակցության) ոչ միայն սովորում են ոտանավորներ, այլև ծնողների հետ միասին յուրացնում տոնական զգեստներ, դիմակներ, փափուկ խաղալիքներ կարելու, գեղեցիկ անձեռոցիկներ ձևավորելու, բնական նյութերով աշխատելու հնարներ և այլն: Մրցույթի հաղթողները խրախուսվում են:

Ցանկալի է վերջում ծնողներին բաժանել հուշաթերթ՝ հաջորդ միջոցառման թեմատիկայի վերաբերյալ:

Հնարավոր է բանավեճ վարել այլ տարբերակով. նկարագրել ընտանեկան որևէ իրադրություն և քննարկել թույլ տրված սխալները:

Օգտակար է ծնողների ներկայությամբ լսել երեխաների պատասխանները՝ դաստիարակի հարցերին. ի՞նչ են սիրում խաղալ տանը, ո՞րն է սիրած խաղալիքը, ինչպե՞ս են վարվում խաղալիքի հետ, ու՞մ են ընկերակից դարձնում խաղալիս, ինչու՞ և ինչպե՞ս են վարվում հարազատները, եթե պատահաբար ջարդվել է խաղալիքը, ի՞նչ մասնագետ են ուզում դառնալ և ինչու՞: Նմանատիպ շատ հարցեր կարելի է նախապատրաստել ամենատարբեր թեմաներով: Այսօրինակ հարց ու պատասխանը

կենդանություն է հաղորդում միջոցառմանը, այն դարձնում ավելի հետաքրքիր:
«Կլոր սեղանի» կազմակերպումը դաստիարակից պահանջում է կազմակերպչական
ջիղ, ստեղծագործական աշխատանք և ժամանակ: Լավ կլինի, որ հատկապես
նախապատրաստական աշխատանքներին օգնեն մանկապարտեզի ողջ կոլեկտիվը,
տնօրենը:

Եզրակաացություն

Այսպիսով, Մանկապարտեզն այն կրթօջախն է, որը կոչված է սատարելու ծնողներին ճիշտ դաստիարակելու երեխաներին: Այս խնդիրը կարելի է իրագործել միայն այն դեպքում, երբ առկա են փոխադարձ հարգանք, բարյացակամություն և վստահություն: Դաստիարակը հեղինակություն վայելում այն ժամանակ, երբ երեխաների հետ աշխատում բարեխղճորեն, ծնողների հետ խոսում վայելուչ, ցուցաբերում համբերատարություն անգամ այն ժամանակ, երբ ներսում զայրույթն ու անհանգստությունն են փոթորկվում: Եկեք անկեղծ լինենք և խոստովանենք, որ կան դաստիարակներ, որոնք ծնողների հետ վայելուչ խոսել չգիտեն, հաճախ նույնիսկ զայրանում են, երբ ծնողները երեխաներին ուշ են տանում մանկապարտեզից, կամ նման այլ փոքրիկ հարցերի ծագման ժամանակ:

Երբեմն աշխատանքից հոգնած վերադարձող ծնողներին տեսնելով՝ երեխաներին ուղարկում են ընդառաջ. «Թող մի երեխա ևս պակասի»: Մինչդեռ երեխան անգամ առանց հրաժեշտի տուն է գնում: Արժե, որ այդ պահը ևս օգտագործվի դաստիարակչական նպատակներով, նա կարող է խոսել երեխայի հաջողություններից, վարվելակերպից, ընկերասիրության դրսևորումներից: Զրույցի թեմա միշտ էլ կգտնվի, եթե դաստիարակը իր դերում լինի: Նման մոտեցումն ինքնին դաստիարակի աշխատանքի գնահատականն է:

Բազմաբնույթ ու չափազանց շատ են մանկապարտեզի մերօրյա հոգսերը՝ սկսած այս դժվարին պայմաններում նյութական բազայի ստեղծումից մինչև երեխաների իրավունքների պաշտպանությունն ու երեխայի անհատականության զարգացումը:

Երեխայի իրավունքների առաջին պաշտպաններն են ծնողներն ու դաստիարակը: Սակայն ցանկալի է, որ երեխաների իրավական պաշտպանության հարցերով զբաղվեն նաև այլ ոլորտներ՝ ներառյալ օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ, զանգվածային լրատվական միջոցներ, հասարակական կազմակերպություններ: Այս բոլոր շահագրգիռ կողմերի երկխոսության առարկան պետք է դառնա երեխայի անձը: Այդ քննարկումները նպաստելու են լայն հիմնախնդիրների բացահայտմանը, հնարավոր լուծումների որոնմանը և անհրաժեշտ որոշումների կայացմանը:

Գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Կրթության մասին» ՀՀ օրենքը
3. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը
4. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներ, Երևան, 2021 թ.
5. Մարության Ս., Դավաքյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, բուհական դասգրքեր, Երևան 2008 թ.
6. Միտոյան Հ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2020 թ.